


THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՒՆԱԿԵՆՐԸ ԲԱԾ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՆ:

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 43 ՆԻՒ ԵՈՐԻ, ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 3, 1898 ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ Ի ՊԱՍՏ ԶԵՅԹՈՒՆԻ

Տեսնելով որ Տ. Փափազեանի առաջարկութիւնն ընդհանուր արձագանք գտաւ հայ ժողովրդի մէջ, վստահելի անձերէ բաղկացեալ յանձնախումբ մը կազմուեցաւ այն շարքում՝ նոյն առաջարկութիւնն իրականացնելու պաշտօնով:

Ի դիւրութիւն նուիրատուաց՝ երկու գանձապետներ ընտրուած են այս առթիւ. մին՝ Տ. Ս. Մ. Շիշմանեան, թիւ 365 Ըսփրինկ ըսթրիթ, Ուէսթ Նոպթըըն, Նիւ Ճէրզի. իսկ միւսն՝ Տ. Ս. Մ. Յովսէփեան, 116 Բօմբըն ըսթրիթ, Լօրէնս, Մասս:

Երբ հանգանակութիւնն գոցուի, երկու գանձապետաց ջով գանուած դրամներն միացուելով՝ Հայկապի ամերիկեան կամ անգղիական հիւպատոսի ձեռքով Զէյթուն պիտի ղրկուին:

Նուէրներ կարելի է ղրկել նաև ՏԻԳՐԻՍԻ և Եփրատի վարչութեանց: Նուիրատուաց անուններն պարբերաբար պիտի հրատարակուին Նիւ Եորքի և Ուէսթըրի Հայ թերթերուն մէջ:

ՏԻԳՐԻՍԻ բոլոր գործակալներէ, թղթակիցներէ ու աշխատակիցներէ կը խնդրենք ջանք չի խնայել այս ժողովրդական հանգանակութիւնն յաջողութիւն մ'ընելու համար, և կը փափաքենք որ մեր այս բարեկամք հաճին իրենց աշխատութեանց արդիւնքն մեզ հաղորդել պարբերաբար՝ հրատարակութեան համար:

Աւելորդ կը սեպենք այս առթիւ յաւելուլ թէ կը հաստանք որ Ամերիկայի Հայ ժողովուրդը փորձով ցոյց պիտի տայ հասարակաց թշնամոյն թէ հայ սիրտը որչա՛փ ուժգին կը տրոփէ Լեռններու զաւակաց համար: Զէյթուն հացի կը կարօտի...

ՑԱՆԿ ՆՈՒՐԻՍՏՈՒԱՑ

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 'Տ. Փափազեան', 'ՏԻԳՐԻՍ', 'ԹորոյէՏ. Հօրամագեանի ձեռամբ', etc.

կամ գործակալին դրամ յանձնող մարդիկ պէտք չի պիտի ունենան իրենց անունն ՉԱՏԷՆ լրագրաց ղըրկել ի հրատարակութիւն:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԷ ՆԱՄԱԿ

Յիշատակութեան արժանի հաստատութիւն մ'է Տիգրանակերտի ազգային մանչերու որբանոցը, և կ'արժէ որ քանի մը աղոթքով ներկայացուի: Որբերուն յատկացուած շէնքը բաւական զեղեցիկ տուն մըն է: Սոհանոցէ, ճաշարանէ, և մառանջ գաս, ունի 4-5 սենեակներ ալ, ինչպէս նաեւ պարտէզ մը, և երկու ծորակով ջուրի մեծեղակ աւազան մը: Բակին մէջ, որբերուն թուով, ջով ջովի շարուած կը տեսնուին մահճակալներ, ամենքն ալ զեղեցիկ ու նոր շինուած: Տեղական սովորութեան համեմատ, ձմեռը ներս, սենեակներու մէջ, իսկ ամառը՝ դուրս, այս մահճակալներուն մէջ կը պտուկին որբերը:

Այցելուն առաջին ակնարկով մը գոհ կը մնայ եղած կարգադրութիւններէն և որբերուն արուած խնամքներէն. ամեն բան կարգի կանոնի տակ է այս տեղ:

Որբանոցին մէջ խոհարարէ զատ, կը գտնուին ուրիշ ծառաներ ալ, որոնք խնամով կը հսկին և հոգ կը տանին որբերու մարտնչեան, լուացումին, նիստ ու կացին, կերակուրի պատրաստութեան և այլն:

Որբերը վայելուչ կերպով հագուած են միեւնոյն ձևով և միեւնոյն տարազով: Շաբաթը անգամ մը կը փոխեն ձերմակեղէնները, ամիսը մի անգամ բաղնիք կ'երթան, և զրբթէ ամեն օր ալ՝ յարմար միջոցին՝ պաղ ջուրով լոգանք կ'ընեն և շատ շնորքով կը կերակուրին:

Հիմակուհի մայր 33 որբ կան քաղքէն և շրջակայ աղքատիկ գաւառներէն: Նիւթակալին պէս, որբերուն կրթութեան և բարոյականին ալ մեծ հոգ կը տարուի: Ս. Կիրակոս եկեղեցիի բակին մէջ, նստարաններով ու դրամակալներով կահաւորուած առանձին սենեակ մը յատկացուած է իրենց: այս տեղ կ'անցուեն իրենց սերտողութեան և դաստառութեան ժամերը: Բաժնուած են երեք կարգերու և կը սովորին մայրենի լեզուի ընթերցանութիւն ու նախնական ծանօթութիւններ: Քանի մը դաստառներ ստանձնած են այդ դասերը և կը դասախօսեն որբասիրաբար: Որբանոցը առ այժմ միակ կառավարիչ մը ունի, փորձ եւ մնայուն ուսուցչի մը պէտքը զգալի է, այս խնդիրն ալ մօտերս կը կարգադրուի. առժամաբար որբանոցին բարոյական ուղղութիւնը յանձնուած է տեղւոյս ազգ. մասնաւոր վարժարանին Ա. ուսուցիչ Մամբէրէի: Աւետիսեանի, որ գիչերներն ու պարագայ ժամերը կ'անցնէ որբանոցին մէջ, որբերու բարոյականին հսկելու համար: Որբերն ուրախ են ու զուարթ, կ'աշխատին կանոնաւոր կերպով և իրիկուն առտու ալ կ'երթան եկեղեցի:

Որբանոցին այս արդիւնաւոր վիճակը և կանոնաւոր ուղղութիւնը կը պարտինք քաղքիս առաջնորդական տեղապահ Ս. Հօր և անոր նախագահութեան տակ կազմուած Որբանոցի Հոգաբարձութեան, որ խիստ գովելի ժրթանութեամբ մը կ'աշխատի: Աւելորդ կը համարիմ ըսել թէ տեղւոյս ժողովուրդն ալ հարկ եղածին չափ կը գուրգուրայ որբերուն վրայ, և շատ անգամ իր մարդասիրական նուէրներն առատօրէն կը շնորհէ որբանոցին:

(Մասին) Մ. Գ.

ՄԱՆՐԱՆՈՒՐԻ

Սօսօրցի Եսայի Կիրակոսեան, որ առանց իր բարեկամաց լուր տալու Լա Պուրիզոնով մեկնած էր Ամերիկայէ, Մասնաշրջանէ կը գրէ թէ նաւարկութենէ յաջողած է ազատիլ ու ողջամբ Մարտիկայ հասնել: «Պատ. Սաղոյեան անցեալ Կիրակի օր թրոյի Հայոց քարոզած ու որբերու համար հանգանակութիւն մ'ըրած է. արդիւնքը՝ 4-01՝ յանձնուած է տեղւոյն Որբանոցի ընկերութեան:

Հայոց Բարեգործական ընկերութեան Գործազր ժողովոյ կողմէ մեզ ղրկուած Յուլիս 8 թիւ պաշտօնագրով մը կը ծանուցուի թէ «մինչև Սեպտեմբերի վերջ իրենց շարաթականները չի վճարող անգամք պիտի ղրկուին ընկերական իրաւունքէն՝ առանց ընտրող կամ ընտրելի լինելու»:

Նիւարքի խաչագողը կը լսենք թէ իր Ուէսթ Նոպթըընի պաշտօնակցին քեռին է. «այս խաչագողն եզրազայն խաչագողն»:

Միտրլայօրցի կը գրեն մեզ. «Միտրլայօր 15000 բնակիչ ունեցող գիւղ մ'է, ուր կան 15ի չափ հայեր, որք կը գոռեն կօշիկի գործարաններու մէջ: Տեղւոյս չորս ընտանիքներէն Արանեանք ցաւալի կորուստ մ'ունեցան յանձին իրենց անդրանիկ որդւոյն: Ազգային շարժում չ'կայ հոս: Բարեգործական ձեռնարկ եղած չէ հոս երբէք: Նայինք Զէյթունի համար ի՞նչ պիտի ընեն մեր ազգայիններն»:

Շաբթուս մէջ Տիգրիս Առաքելեան (Տիգրանակերտցի) իր մահկանացուն կնքեց ի Ուէսթ Հոպթըըն, և թաղուեցաւ տեղւոյն գերեզմանատան մէջ Տ. Վահրամ քահանայի ձեռքով: Հանգուցեալն կը թողու երկու զաւակ ու անմխիթար ամուսին մը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Օրուան տաք խնդիրը Ռուսիոյ Զարին վերջի պաշտօնագիրն է, որով Նիքօլա կայսրը կ'առաջարկէ Եւրոպական Տէրութեանց զինաթափ ըլլալ, բանակներն ու նաւատորմիղներն ցրուել բոլորովին՝ ամեն դժուարութիւն համազգային վեհաժողովի մը առջև լուծելու պայմանաւ: Թէ և այս մասին կ'ընտրի թէ Գերմանիա և

Աւստրիա իրենց հաւանութիւնն արուած են կանխաւ, բայց շատ հաւանական չի թուիր առաջարկին միաձայն ընդունուիլն Եւրոպական կառավարութեանց կողմէ: Մամուլը ընդհանրապէս կը տարակուսի Ռուսիոյ կայսեր անկեղծութեան վրայ. և կ'ըսուի թէ ներքին գծուութիւններն ու իւրական անցուկ վիճակ մը ստիպած են Զարը մի այսպիսի առաջարկով փրկել Ռուսիան Մեծին Բրիտանիոյ հետ չափուելու մօտալուս վտանգէն: Ոյ՛հաք կը կարծեն թէ Զարը մտաւորական հիւանդութեան ենթակայ լինելով՝ իր գաղափարները կորսնցուցած՝ բանդագուշէ սկըսեր է իսկ ուրիշներ՝ Զարին այս անակնկալ առաջարկն աւելի խորունկ քաղաքագիտութեան մը արդիւնքը եղած լինիլ կը կարծեն՝ կոմս Մուրավիէֆ Ռուսիոյ Չինաստանի մէջ գրաւած երկիրներն կարգի դնելու, և մանաւանդ Սիպերիան երկաթուղիներն լրացնելու համար: Երբ մը պէտք ունենալու պիտի լինի այս անգամ, և Լուսնայի առաջարկ մը լուսադոյն միջոցը կրնար ըլլալ:

Սակայն իրաց ներկայ կացութեան մէջ այսօրինակ զինադադար մը անհնարին երազ մ'է միայն: Դեռ մարդիկ հասած չեն այն բարձրութեան աստիճանին, որ իրենց դժուարութիւններն իրաւախոհութեամբ լուծել կարենան:

Ասկէ երկու տարի առաջ մեծ քաղաքագէտ մը Զարին փարիզ եկած ատենը ըսաւ թէ «Եւրոպական պատերազմը պիտի սկսի այն ատեն երբ մեծ տէրութեանց մին զինաթափ ըլլալ առաջարկէ»: Արդեօք այս մարգարէի խօսքերն իրականութիւն կը գտնեն ու 27 տարիէ ի վեր պատրաստուած որբերութիւնն կը մօտենայ պատերազմի թատերաբեմին վրայ ներկայացուիլ վերջապէս: —Ո՛վ գիտէ:

AMIN MERHIGE & Co.

29 BROADWAY, NEW YORK, Room 212 ՄԵՐԻՄԵՐԻՍԻ (Հօլմէյլ) ՎԱՃԱՌԱԿԱՆՔ

Արևելեան և Տաճկական Ապրանայ Այս վաճառատունն իր տեսակին մէջ ամենամեծն է ինչու երբ: Հոն կը վաճառուին ամեն տեսակ անգլանգործներ, սեղանի, մէնթըլի, փրանսի ևն. մետաքսեայ և ոսկեթել ծածկոցներ, Դամասկոսի վարագոյրներ, Բերիայի աղապանի, քէֆիա, ևն. ևն.:

Հայ վաճառականք կը հրաւիրուին փորձել միանգամ: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք փութով և խնամօք կը կատարուին: Գրներն չափաւոր և սպրանքներն լաւագոյն լինելով՝ ուրիշ և է տուն չէ կարող մրցիլ այս տան հետ: Վաճառատան հասցէն ի վերև կը գտնէք:

Ա.Ղ.Գ.

Վաղը Ս. Ոսկերբան եկեղեցւոյ մէջ տեղի կ'ունենայ Պ. Մատթէոս Ֆէրրահեանի (Գաղատացի) ամուսնութիւնը ընդ օրիորդ Եւնիկէ Շիշմանեանի (Ծօղաւորի): Ժամերգութիւնը կ'սկսի ժամը ճիշդ մշկին՝ կէսօրէ յետոյ:



ՇԱՐԽԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
Կը հրատարակուի մինչև Շարաթ օրեր,
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:
Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ

Table with 3 columns: Item, Price, and Quantity. Includes 'Տարեկան' (Annual) and 'Վեցամսեայ' (Six-monthly) rates.

Մտար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԳ, ՇԱՐԽԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 3 1898.

ԴՐՕՇԱԿ ԶՐՊԱՐՏԻՉ ՄԷ

Արդիարի խնդիրը վերջապէս եկաւ հասաւ Ամերիկայ
չնորհիւ ՏԻԳՐԻՍԻ, որ ազատ լրագրի մը յատուկ գովելի
անկողնի մակարտութեամբ հրատարակ բերաւ զայն: Պաշտան-
եան հայ օրագրութիւնը այդ խնդիրը կը յուզէր արդէն և
ամերիկեան Հայ մամուլը լուս չէր կրնար մնալ: Ինչպէս
ըստեւ չէ այս խնդիրը՝ իրեն հանրային բարոյական խնդ-
րի՝ կենսական կարևորութիւն ունի մեզ համար:

Մի քանի անհատներ, կամ խմբագրական մարմին մը,
և կամ յեղափոխական կազմակերպութիւն մը հրատարա-
կաւ ամբաստանեցին զԱրդիար ծանրակշիռ յանցանքնե-
րով — մատնիչ, դաւաճան հռչակեցին զայն, և սպառնա-
ցան վաւերացնելով իրենց հաստատել իրենց ամբաստանու-
թիւնը:

Քսան տարիներէ ի վեր Հայ ազգին ազատական ձգտ-
ումներուն կարողագոյն ներկայացուցիչներէն միոյն, հան-
րած աթ գրագէտին զէմ բերուած այս քսանմեկ ամ-
բաստանութիւնը ցնցեց ժողովուրդը զայրոյթի և կասկա-
ծի խառն զգացումներով:

Եւ ահա Արդիար ճակատարաց հրատարակ կուգայ ու
պատուոյ ատեն կը պահանջէ՝ յանձն առնելով մահաւոր
պատժութիւն՝ երբ յանցաւոր դատուի: Ամբաստանիչները
խոյս կուտան՝ ո՛չ առգումբաներով կը հաստատեն և ո՛չ
պատուի ատենի կը մտնեն:

Մենք որ ցարդ Հանդիսատիսի գեր կատարած ենք, բը-
նականաբար կը մտածենք — ամբաստանութիւնները կամ
իրաւ են կամ սուտ: Եթէ իրաւ են՝ ամբաստանողները
պարտաւոր են ապացուցանել զայն և ազգը փրկել դաւա-
ճանի մը մեքենայութիւններէն: Այս չ'ընելը պարզապէս
դաւաճանի մեղսակցութիւն կը նշանակէ: Եթէ սուտ են՝
այն ատեն ամբաստանիչները ստախօս, զրպարտիչ և իր-
րև հանրային բարոյականի ապականիչներ՝ յոռեգոյն են քան
դաւաճաններ:

Հայ ժողովուրդը իրաւունք ունի պահանջել ազգային
զրպարտիչի մը պատժութիւնը այնքան խստութեամբ որքան
ազգային դաւաճանի մը: Կ. Յ. ՓԱՓԱՋԵԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Անցեալ Շարաթ Նիւ Եորքը ոտքի էր... Անպատու
ցնծութեամբ ու հայրենասիրութեամբ լեցուած, յուզուած
միլիոնաւոր ժողովուրդը ելած էր ողջունելու իր Հերոսները:

Ամենափառաւոր օր էր անցեալ Շարաթը: Միացեալ
Նահանգաց անկախութեան ոսկեղէնի թուականէն ի դատ
օր մըն ալ չը կայ այսքան նշանաւոր այս երկրի պատմու-
թեան մէջ, և թերևս դարբնու անհաշիւ օրերուն մէջ ալ
նման օր մը չը մարգարապարտուի պատմութեան շէրուն մէջ:

Նիւ Եորքի համար օրը անդուգական էր:
Ծովային անհեղ պատերազմէն յալթական վերադար-
ձող Հերոսները ո՛չ թէ միայն ողջունուեցան Նիւ Եորքի
ամբողջին, այլ պաշտուեցան անկէ՝ յուղմունքէն խելայեղ
ամբողջ՝ աստուածացուց Հերոսները:

Մեծ են այս Հերոսները, Սամսըն, Բայա, Հոպսըն և
«Թնդանթի» ետին կեցող մարդիկը»:

Բայց աւելի մեծ է այդ ժողովուրդը որ իւր Հերոսնե-
րը պաշտել գիտէ: Նիւ Եորքի ամբողջ Շարաթ օրը մեծ
էր... որովհետև Հերոսապաշտ էր:

Ինչո՞ւ այսքան մեծցնել, այսքան պատուել ու պաշ-
տել այս պատերազմիկները. անոր համար մեծ ու պաշ-
տելի են ատոնք՝ որովհետև յաղթող են, չէ՞. Սամսըն և
ամենայնայնաւ նաւազը յաղթող ըլլալուն համար չէ որ
մեծ են, Հերոս են: Ամեն յաղթող Հերոս չէ: Ալ որով-

հետև ասոնք Հայրենիքի մը պաշտպանութեան և տանջու-
ած ու հարստահարուած ժողովուրդի մը փրկութեան սի-
րոյն համար կուեցան, իրաւունքի, ճշմարտութեան և
մարդկութեան համար մեռնիլ յանձն առին. ահա՛ ասոր
համար մեծ են, Հերոս են: Թէյմուրէնկ, Պիզմարք և Հա-
միտ յաղթողներ են, բայց Հերոսներ չեն. հրէշներ են:

Նիւ Եորքի ամբողջ ճանչցաւ իւր ճշմարտ Հերոսնե-
րը, ու արշալոյսէն մինչև թանձր գիշերը ծափահարեց
զանոնք: Իրջանիկ են այն Հերոսները, որոնք մարտադա-
տի թնդանթի բոմբիւններէն վերջ՝ գիրենք պաշտող ժո-
ղովուրդի ծափերուն ձայնը կը լսեն:

Սամսըն, Տիւրի, Բայա, Հոպսըն և նաւազը ամենաբը-
ջանիկ Հերոսներ են, որովհետև իրենց յանդուութեան,
քաջագործութեան և բուռն հայրենասիրութեան արդիւնքն
իրենց ազգովը կը տեսնեն, իրենց քաջագործութենէն ծը-
նած հալածուած ազգի մը կեանքը կը տեսնեն, ու...
անհունապէս կը հրճուին, անսահման ցնծութեան մէջ կը
մխրճին: Ուրախ ու գոհ են, որովհետև իրենց Հերոսու-
թիւնը գնահատող ժողովուրդը մը կը տեսնեն ու մեծ
գործի մը կատարուիլը:

Սանթիակոյէն վերադարձող այս Հերոսները իրաւի մեծ
են, բայց Հերոսներ կան՝ որոնք իրենց չափ ժպտուն չեն,
բայց իրենցմէ շատ աւելի մեծ են... ասոնք մարտիրոս
Հերոսներն են:

Մեր Հերոսները, Հայոց Հերոսները, մարտիրոս Հերոս-
ներն են. Տիւրի ուրախութեան չափ տխուր են, բայց ան-
կէ մեծ են: Հայ Հերոսը իւր հերոսութեան արդիւնքը իւր
ազգերով չը տեսնելուն համար չէ որ դժբաղդ ու տխուր
է. ան շատ լաւ գիտէ որ իւր դիակին վրայ շատ շատեր
ալ պիտի գեղուին՝ մինչև որ Հայը կեանք ունենայ. այլ
այն դժբաղդ է, որովհետև այն ժողովուրդը՝ որուն հա-
մար իր կեանքը կը զոհէ, և կամ որուն համար ան կ'ապ-
րի, շատ անգամ համարանքի ու սիրոյ արցունքներ չի
թափեր անոր դիակին վրայ, և ո՛չ ալ նուազկոտ ծափեր
մը ունի իրեն համար՝ իւր կենդանութեան ատեն. անէ՛ծք
դիակին, արհամարհանք ապրած կեանքին. ահա՛ մեր
յարգանքը դէպի մեր Հերոսները:

Պատմութեան մէջ անդուգական ամենամեծ Հերոս-
ները անոնք են, որոնք յուսահատականը փորձած են, յու-
սահատականը ըրած են: Մեծ քաջերն անոնք են, որոնք
անհաւասար ուժին դէմ կուռած են միս մինակ, կամ շատ
նուազ ուժով մը և ասոնք յաղթած են, ու չը յաղթող-
ներն ալ արիւնլուայ փուռած են գետին, և եղած են ո՛չ
թէ Հերոսներ միայն, այլ մարտիրոսներ:

Ճիւղակիւր, Մանուկը, Չաքարեանը, Բարգէնը, կա-
րոն, Յակոբը, Փէնճէլին և Աւետիսեանը անհար ուժին,
հրէշային զանգուածին դէմ կուռեցան, սիրտ քրտի դի-
մադրեցին այն ոյժին և իրենցմէ ոմանք ինկան անհաւա-
սար մարտին մէջ ու քանին ալ օր մը կրկին կուռելու հա-
մար կ'ապրին:

Տիւրի, Սամսընի և նաւազին հրամաններ զրկուե-
ցան՝ որ երթան ու կուռին. մեր Հերոսները անոր համար
ալ մեծ են որովհետև ինքնաբերաբար և ազատ կամքով
զոհեցին իրենց հանգիստը, իրենց նիւթականը, իրենց կեան-
քը՝ Հայրենիքի հանգստութեան, բարեխառութեան և ազա-
տութեան համար. և եթէ այս սրբազան կուռին մէջ ըն-
կան անոնք ետխաղանին տակ, կամ օրերով կախուեցան
կ. Պոլսոյ հրատարակը, և կամ ուռմիբ բեկորներով ջարդ
ու փշուր եղան, անոր համար չ'արհամարհենք մեր Հե-
րոսները, այլ աւելի մեծցնենք զանոնք ու վրանին խըշ-
խըշնք, որովհետև մարտիրոսներ եղան անոնք:

Մեծ են Հերոսները, բայց չա՛տ մեծ են մարտիրոս Հե-
րոսները: Թ. Զ.

ԽԱՉԱԳՈՂՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԸ ԱՆՑԱԾ ՁԵ՞՛

Ուէսթ Հոպոքընի Հայոց մէջ Բըզալաւհ անուն Գաղ-
թէացիի մը յարուցած ընկերական ու ընտանեկան կուռ-
ներն ու բաժանումներն պարտաւոր ենք հոս արձանագրել
իւր պախարակելի գործ և անպատկառ խաբէութիւն:

Թուճայեան մակնուսան տակ ծածկուած այս կեղծա-
ւորը քանի մ'ամիս յեղափոխական ազգասէրի մը հովիբը
փչեցէ վերջ, վերջերս ուրիշ գոյն մը դուրս տուաւ — ց'նոր
տնօրինութիւն:

Բըզալաւհ կեղեցիկի մը կողմէ «ոչ Գրիստոնեայ» Հա-
րոց համար քարոզիչ կ'ընտրուի ամիսներ առաջ՝ աւետա-
րան քարոզելու պաշտօնով, բայց քաջ քաջ փիտեակով թէ այդ
անուան տակ անկարելի պիտի ըլլար իրեն տեղւոյն Հայե-
րը շահագործել, տարբեր դիմակ մը հագած կը ներկա-
յանայ անոնց, որով ո՛չ միայն Հայերն՝ այլ և ամերիկացի-
ներն խաբած կ'ըլլայ՝ իր անարգ շահուն համար: Միա-
միտ ամերիկացիք կը շարունակեն վճարել ու քաջալերել
այս խաչագոյն, սա հասկացողութեամբ որ «նոր Պօղոս»
Ուէսթ Հոպոքընի բարձանց վրայ կորսուած ոչխարներ
գտած՝ Աւետարանի լայսին ու փրկութեան կը բերէր: Սա-
կայն ինք անդին՝ յուսալով որ ոչ ոք պիտի կրնար թափան-
ցել իր թանձր դիմակին՝ տարբեր ճամբայէ մը քայլին շա-
հաւոր կը գտնար: «Հայրենակիցներ, կ'ըսէր վերջերս, թող

Նախորդ վարդապետի տօնին առ-
թիւ հանդիսաւոր ժամերգութիւն և
Ս. Պատարագի արարողութիւն կա-
տարուեցաւ ըստ Հայաստանեայց ե-
կեղեցւոյ: Այդ օրուան գովելի նո-
րութիւններէն մին եղաւ Տիար Ա.
Պ. Սէքլէմեանի խօսիչն եկեղեցական
արարողութենէն վերջ: Ս. Սէքլէմե-
ան օրուան տօնին վրայ պատմա-
կան ու կրօնական բացատրութիւն-
ներէ վերջ, զգայուն և յուզիչ խօս-
քերով սա եզրակացութեան հանգե-
ցաւ թէ մենք Հայերս մեր քրիս-
տոնական պարտականութիւնն միայն
աղօթք ընելով ու Ս. Գիրք կարդա-
լով չէ որ կատարած պիտի ըլլամք,
այլ զոհողութիւն ընել սորոքելով.
մեր ազգին մնացորդ անախուժ որ-
բերն, որք կը տանջուին թշուառու-
թեան ու աղքատութեան մէջ, պի-
տի փրկուին մեր զոհողութիւններով
են. և: Մեր նպատակը չէ Ս. Սէք-
լէմեանի խօսքերուն իմաստն ըզան-
դակել աստ, այլ ցոյց տալ մեր կարգ
մը հին պատուելիներու ու հետեո-
ղացն թէ՛ մեր ժողովուրդը ճշտի-
քի ու արքայութեան վրայ եղած ճո-
րոմ քարոզներէն աւելի այս կարգի
քարոզներու պէտք ունի, ներկայ ժա-
մանակին մէջ մանուկները բացած՝ մեզ
իւր արիւնքով վէրքերը բացած՝ մեզ
կը դիմէ ու դարման կ'աղաչէ. մենք
պէտք չէ մեր բոլոր ուշադրութիւնն
կեդրոնացունեմք կրօնական այն ձե-
ւերուն մէջ, որք մեզ կը յիշեցունեն
դարբն առաջ մեր վանական Հայոց
միասնական կեանքը:

Հետզհետէ Գլոստայքէ առած նա-
մաներս մի և նոյն յուսահատական
ըլերերն են. և այժմ աւելի կը շեշտ
բարեկամ Հայերն հոն երթալու գա-
ղափարին դէմ խօսելով: Գանուած
հանքերն սեպհականուած են ու նորեր
գտնալու յոյս չ'կայ սա այժմ. ահա-
գին բազմութեամբ լեցուած Տօ-
սըն ու շըլաքայքն. միայն Տօսըն
մէջ 50000է աւելի ժողովուրդ իրու-
նուած, անգործ ու չուրած կը թա-
փառի: Միայն անոնք կրնան յաղ-
ղիլ, կ'ըսէ, որք դրամագլուխ ունին
և առևտուր ընելու մէջ ճարպիկու-
թիւն: Բարեկամիս նամակներէն մի
քանի քաղաքներ օգտակար ու հե-
տաքրքրական կրնան ըլլալ:

Յրէզնոյէ ինձ հետ Գլոստայք
եկողներ ամենքն ալ կը վերադառ-
նան (նախորդ երկու շաբթուան մէջ
5-6 հոգիներ հասան ու տակաւին կու-
գան) երկրին կեանքէն նեղուելով.
շատեր կը վերադառնան, որովհետև
յոյս մը չեն տեսներ. շատերն ալ ի-
րենց ապրուստն հայթայթելու հա-
մար այդ տեղ ապրին նախամեծար
կը համարեն քան թէ այս կեանքով
հարստութիւն գիշելը:

Եթօքօն գետին սառերը պատուե-
ցան (Յունիս ամսոյ մէջ կը գրէ այս
նամակները) և Տօսըն քաղաքը ջու-
րերու և սառակոյտներու մէջ կը լու-
ղայ. 10-30 ոտք մեծութեամբ սառի
կտորներ իրար վրայ դիզուելով ջու-
րին հոսանքը կ'արգիլէին և մեծ վախ
կար թէ քաղաքը հեղեղէն քշուի.
բարեբաղդաբար սառերը շուտով տե-
ղի տուին և գետն շարունակեց իւր
անհեղ ընթացքը իր հետ քշելով բո-
լոր սառերն ու ծովեզերք գտնուած-
ներն, նաւակներ, փայտի դէղեր ևն.
ևն. սեսարանը սոսկալի էր:

Ուտիլիքի նիւթերն միշտ սուղ
են, միայն ալիւրն աժան է. պարկը
§ 3ի կը ծախուի քաղաքին մէջ, իսկ
չըրկայ հանքերը § 20—50ի՝ հեռու-
ութեան Վամիմատ: Վերջին եկող-
ներէն ոմանք հաւկիթ բերած էին հե-

տերինն ու հատրճ—23ի շտապեցին: Լրագիրներուն զանազան հաւատարմութիւնն այդ փոքր մերկէն կեանքը լրագիրներուն 3-5ի կը շտապուի: Բանի մը օրերը առաջ մարտի 2-ը լրագիրները բերած էր զանազան հրատարակու կարգալ: սենեակ մը վարձեց ինքն ինքն զոգովուրդն հոն հրաւիրեց: բազմութիւնը լեցուեցաւ 23 տղար մուտք վճարելով լրագիր ընթերցում լսելու:»

«Մինչև հիմայ ո՛ր է հայու մը պատահած չեմ դեռ: Այժմ՝ բնա գիշեր չ'ունիմք, բուն մէջ միայն չորս ժամ արև չենք տեսներ, բայց կատարելապէս լոյս է»: Ե. Մ. ՆՇԻԿՆԱՆ

Հարթ Փրբար. Օգոստոս 20

Ժամանակ է այլ ևս որ մեր մեր հայ Գրարարաց միութեան վրայ խոսուի: Բանի որ ընկերութիւնը երկանց մէջ էր տակաւին, ուզեցինք ինչորք լուռ պահել մեր մէջ, և այսօր որ կ'ըլլանք մամուլի մէջ հրատարակ հանելու Հարթ Փրբարի Հայ Գրարարաց Միութեան ծնունդը՝ այն վստահամար է միայն թէ մանուկը անհելու և գարգանալու ամեն խոստում և նշան կը զանցնէ:

Հայկական Զատիկին օրն էր (Ապր. 17) երբ քանի չափ հայ երիտասարդներ տուն մը հաւաքուած՝ որոշեցինք Գրարարաց մը հաստատել: Անմիջապէս յանձնարուեալ մը ընտրեցինք, որպէս զի կանոնագիր մը պատրաստէ և ընկերութեան կազմակերպութեան առաջին անհրաժեշտ քայլերն առնելով՝ կարելի եղածին չափ շուտ ժողովին տեղեկագրէ: Երկու շաբաթ վերջը տեղեկագիրը պատրաստ էր՝ և ընկերութիւնը պաշտօնապէս կազմուած:

Հետևեալ Պարոնները ընտրուեցան վեցամսեայ վարչական ժողովոյ մէջ պաշտօնավարելու: Արտէն Ծմաւունեան՝ Ատենապետ, Ահարոն Սալազարեան՝ Ատենադպիր, Սարգիս Կիրակեան՝ Գանձապետ, Սամուէլ Հէղինեան և Միտայ Գալայճեան:

Վարչութիւնը անմիջապէս սկսեալ զնումներ ընել և մի քանի օրէն թիֆլիզէն և Պոլսէն բաւական թուով գրքեր ընդունել կ'ազնակալէ:

Վերջուր վարչութեան անդամոց մին պատարագի գնացած ըլլալուն՝ անոր տեղը ընտրուեցաւ Պ. Յակոբ Նաղեան:

Ըստ կանոնագրութեան՝ ընկերութեանս բոլոր գրքերը Ուսման թանգարանին պիտի թողուին, եթէ անդամոց սակաւութեան պատճառով ընկերութիւնը լուծել հարկ ըլլայ: Այլ Ուսման հայերը թող սպասեն:

Արժ. Վաղինակ վարդապետ Միտակեան, որ այս կողմերու իր թեմերը այցելելու ելած էր, անցեալ շաբթու մեզ ևս այցելեց: Իւր այս այցելութիւնը շատ լաւ սպասուութիւն թողուց տեղւոյն հայ գաղթականութեան վրայ: Մասնաւորապէս Կիրակի առաւօտեան իւր մատուցած հանդիսարար Պատարագը, որուն կարօտը կը քաշէինք շատերս տարիներէ ի վեր մասնակցած չ'ըլլալով Ս. Պատարագի խորհրդոյ՝ ըստ Հայաստանայց Եկեղեցոյ: Այս առթիւ միտուեցաւ նաև նահանգիս անդրանիկ հայ դաւակը, պարոնիկ Հայկազ ժամակոչեան:

Տ. Վաղինակ վարդապետի նախագահութեամբ գումարուած ընդհանուր ժողով մը ընտրեց հետևեալ Պարոնները՝ իւր Հոգարարձու տեղւոյն ազգային գործոց: Յովհաննէս Մալիկեան՝ Ատենապետ, Արտէն Ծմաւունեան՝ Ատենադպիր, Կարապետ Գալայճեան՝ Գանձապետ, Սարգիս Կիրակեան և Մելգոն Աղամալեան:

Որոցք ի նպատակ հանգանակութիւն մը ևս եղաւ և Հարթ Փրբարի սակաւութիւն հայերէն կարելի եղաւ գանձել 63 տղար: Ա. Մ. Ս. Ն.

ԹՐԲԱԿԱՆ ԽԺԴԺՈՊԹԻԻՆ Ի ՎԱՆ

Կոստանդնուպոլսէ Օգոստոս 25 թուակիր հեռագիր մը կը գուժէ թէ Վանի մէջ տասն և մէկ հայ յեղափոխականներ դատապարտուած են արդարութեան(?) դատարանին առջև: Ասոնցմէ երկուք մահուան, իսկ մնացածներն բանտարկութեան դատապարտուած են:

Թուրքիոյ մէջ բարենորոգումներ մտցնելու նոր քայլեր են ասոնք: Եղափոխականը երկրի օգտին աշխատող մարդն է, արժանի գնահատութեան: Զայն դատապարտող լիբերներ երկրի թշնամիներն են՝ այս յեղափոխականայ պատժոյն արժանի:

Աւետարանն հոս գրուած մնայ. ի՞նչ փաստ ձեզ. զայն ո՛չ կը կարդանք և ո՛չ կը քարոզենք. երբ ամերիկացի մը գայ, հոգևոր երգեր երգել կը ձեռնենք, և երբ մեկնի՝ մեր գիտցածը կ'ընենք նորէն. թո՛ղ այս մարդիկ կարծեն թէ մենք հոգևոր պաշտամունք կը կատարենք հոս, մեր գիտցածը մեր ձեռքն է սակայն. և եթէ մերժեմ Աւետարանը հոս դնել, ամսական կը կտրեն, և դուք չէք կարող ինձ վճարել:»

Ի՞նչ անամօթութիւն... խաչագող բառը բաւական է արդեօք այսօրինակ կեղծաւորներու արժանաւոր սահմանն գծելու համար...:

Այս յայտարարութիւնն բաւական էր ի հարկէ տեղւոյն երիտասարդութեան գայրոյթը արթնցնելու համար. կռիւներն կ'սկսին, ու ժողովրդին մեծ մասը կը գտնուի կ'երթայ իր գլխին ճարը գանձելու, զի օտարներէն չ'կար յոյս:

Սակայն Բըզգալլահ կ'ունենայ իւր հետեւորդներն. մի քանի ասորիներ և քանի մ'ալ այս և այն անձին դէմ հակահրուժիւն ունեցող անձինք՝ խաչագողի «խաչին կոթը» կը դառնան: Եւ Բըզգալլահ չունչը կտրած՝ իր բարեբարներուն կը վագէ: — «Օգնութիւն, օգնութիւն... կ'ըսէ, կը հալածուիմ. Պողոսի պէս կը բանաւսեն զիս. Յիսուան ու Աւետարանը կը հալածուին. այս խաւարաւիտ գայլերն պիտի խանգարեն մեր աղօթքի ժողովն ու փաստն մեզ»: Տեղական ոստիկանութեան զինուած կ'ըլլայ. երկու ծրարներ աղօթքի ժողովին ներկայ կը լինին, որպէս զի նոր Պողոսն ու իր հօտը պաշտպանեն ի հարկին Ուսման Հոպոքընի «Հայ լիբերու» դէմ:

Սակայն աղօթքի ժողովն ու ուրիշ ամեն ժողով կ'անցնին առանց ո՛ր է միջոցաւ, զի «լիբեր» չի կային ի Ուսման Հոպոքընի... բայց մէկ վարպետորդի խաչագողէ: Պատուելի կամ Տըթ. Թուսպեան ճշմարտութիւն խօսած չ'ըլլար երբ կ'ըսէ թէ Հայերն կը հալածեն Առետարանն ու զայն քարոզել ու տարածել ջանացող Ուսման Հոպոքընի Թումայեան նոր աւետարանին:

Ասոնք անմարտելի խաբէութիւններ են, բարեկամ: Դարերէ ի վեր Բրիտանի և անոր Աւետարանին համար չարաշարուող ազգ մը նոյն Աւետարանն չի կրնար հալածել այսօր. դեռ քանի մը տարի առաջ նոյն ազգը, որոյ բեկորն է կ'ապրի Ուսման Հոպոքընի բարձանց վրայ, 100 հազար նահատակ տուաւ իր լեզուն, Փրկչի խաչին ու Աւետարանին համար: Մեր պատմութեան անձանօթ այս Պարոնին ըսելու ենք թէ երբ բոլոր աշխարհ, նոյն իսկ Իսրայէլի զաւակներն, կը հալածէին Աստուածորդին ու անոր վարդապետութիւններն, այս ազգն էր որդեգրեց ու ընդունեց զայն: Առաքեալներն հալածուեցան ուրիշ երկիրներու մէջ, բայց Հայը ինք հրաւիրեց զանոնք Հայաստան՝ փրկուելու համար: Աւելի անպատկառ ստախոս մը կարելի չէ երեւակայել քան այն անձը որ՝ կը համարձակի այսպիսի ազգի մը համար ըսել թէ «Աւետարանն ու Բրիտանոսը կը հալածեն»:

Պ. Բըզգալլահ, Հայ ժողովուրդն ու Բամուլը ձեր անձի հետ գործ չունին. վստահ եղիք ասոր, զի անհատը կարեւորութիւն չունի ընդհանրական գործոց մէջ: Մենք Աւետարանն չենք կրնար հալածել. մեր պատմութիւնն՝ որ թերևս անձանօթ է ձեզ, այս մասին կը խօսի արդէն փառաւոր կերպով: Սակայն մենք՝ բոլոր Հայերս անխոր՝ կը հալածենք խաբէութիւնն ու խաչագողութիւնն միայն, որով ծածկուած էք եղբ' Ուսման Հոպոքընի Հայերն ու բարեպաշտ քիչ մը Ամերիկացիներն խաբելու համար: Կրնաք վստահ ըլլալ թէ այս ծանր դիտողութիւններն ոչ ոք պիտի ընէր ձեզի դէմ, եթէ ձեր պաշտօնն ձեռք ձգէին վերջ՝ անկեղծութեամբ երթայիք ժողովուրդին և՛ առանց կեղծելու՝ ըսէիք թէ «նոր եկեղեցի մը հաստատել եկած եմ՝ Աւետարան քարոզելու համար»: ուղղող կը հետեւէր ձեզի, չ'ուղղող իր ճամբան կ'երթար: Իսկ դուք տարբեր կերպով գործեցիք, որոյ արդիւնքն եղաւ այսչափ բաժանում, կռիւ ու երկպառակութիւն: Ըսէ՛ք, կը խնդրենք, խաբէութեամբ աւետարան քարոզելն ուսկի՞ց սորվեցաք:»

Ձեզ խրատ կուտանք սակայն, ձեր իսկ շահուն ու օգտին համար, փոխանակ մեր պաշտած Աւետարանն անարգ շահու միջոց մ'ընելու, հասարակ գործաւորութիւն, կողակարութիւն գէթ ընէք ՊԱՏՈՒՄՈՒՄ արարուած մը ճարելու համար... խաչագողութեան ժամանակն անցած չէ՛:

Վերջի պահուս նամակ մ'ընդունեցինք Տըթ Ե. Թումայեանէ, որով նամակագիրն իւր ընթացքն արդարացնել կ'աշխատի ու կը հերքէ իրեն դէմ եղած կարգ մը ամբաստանութիւնները: Այս նամակ կը հրատարակենք գալ անգամ՝ առիթ տալով ամբաստանելոյն պաշտպանել իւր անձ ու գործ: ԽՄԲ. ՏԻԳՐԻՍԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԴ

Բանիցս պատահած է որ մեր ազգայիններէ ոմանք իրենց նորածին երախայն՝ Կիրակի օր եկեղեցի բերած են յանկարծ՝ միտուել տալու համար: Եւ որովհետև այսօրինակ դիմումներ կրնայ անպատկառութիւններ ծագել, կը խնդրուի ծնողներէ, որ երբ նորածին մը միտուել տալ փափաքին, գէթ երեք օր առաջ կտնայու լուր տան Հոգարարութեանս Ատենապետ՝ Տ. Յ. Թավադանեանի, ի թիւ 343 Պրօտուէյ. և կամ Արժ. Սաղ վարդապետի, 154 իսթ, 27րդ փողոց:

Իսկ Պատկի խորհրդոյ համար գոնէ 15 օր առաջ Ս. Եկեղեցու պաշտօնէից լուր տալ անհրաժեշտ է: ԱԶԳ. ՀՈՒՄԱՍՏԱՆԻ ԹԻՒՆ

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԹՈՒՐԻՔԸ

(Վէպիկ)

Տիգրանակերտէն ոչ այնչափ հեռի, Հինէն գիտցուած գիւղ մը կար բերրի, Որոյ ընակիչք, Հայն ու եղիարին Մի թուրք աղայի ստացուածքն էին: Այս մարդու անուն, խնդրեմ մի՛ մոռնաք, Ապտ-իւլ-գաւոր էր, Գուրանի զաւակ. Իսկ իր արհեստը—կամաչեմ ասել Գահճապետութեան պաշտօնով կարգէր: Նա իր բոլորութիւնն ըրաւ շարք ու բուրգ, Զի վագրէն բիւրցոյ հրէշ մ'էր անգութ. Բանի քանինն' իւր ձեռքով մեռան, Շէն գիւղ ու տներ քար ու քանդ եղան: Իւր գիւղի մօտերն որչա՛փ կտրիճներ, Տկող ու նօթի մուրացկան դարձան. Ոսկի կողոպոյտ այնչափ էր դիզած, Որ չափն ու սահման ինքն էլ չէր գիտցած: Բաղդը չորս դիէն իրեն հետ հաշտ էր, Վախկոտ եւրոպան—այդ արգէն հեշտ էր. Զի ունէր իրեն սրտակից պաշտպան, Կանանոցի պետ՝ կատողած խալիֆան: Բանի որ Համիտ կ'ապրէր, մահարեք Ապտ-իւլ-գաւորը միշտ հարկի մէջ էր, Գող, մարդասպանը մեծ նշաններով, կը քաջալերէր աղամանդներով. Սա կարծես զազան դարձեր վայրենի, Մեր մտքէն չ'անցածն կ'ընէր մի առ մի. Զէնքերու մասին՝ բան պակաս չ'կար, Գնտակ ու վառօդ տակաւներով կար. Միայն քաջութիւն չունէր սրտին մէջ, Բայց Թուրքին համար զոցուած է այս վէճ. Օսմանցիք միջոյն հարձակում կուտան, Երբ իրենց զահեբն շղթայուած կ'ըլլան: Բ.

Օսմանն որ դահճին միակ զաւակն էր, Ի հարկէ գառնուկ չէր կրնար լինէր. կը ցաւէր որ դեռ, պղտիկ լըրճուկ Ու անկարող էր ըլլալ հօր—նեցուկ: Ինքն էլ կը նեղէր իր դրացիներ Հաւն անոնց ու սագն կը յափշտակէր. Իսկ անոնց շուներ ու կատուներուն, Ի՞նչ չարաշարանքներ կը տնօրինէր: Իսկ արտերուն մէջ թթու, ձմերուկ, Փերփիթ, Իսպանաղ, բանձար ու վարունգ, ձիւղ իւրբու մօտ խակ կոտորուեցան, Դիւցազնի ձեռքով եղան ցրբ ու ցան: (Շարունակելի)

ՊԱՏՍԱՍՍԱՆՆԵՐ

Գ. Ս. Զըլի—Զեր յօդուածը չի պիտի կրնանք հրատարակել, զի նորութիւն մը չի պարունակեր իր մէջ, այլ շատ անգամ ըսուածներու կրկնութիւն մ'է միայն:

Թ. Բ. Լուվէլ—Այդ խնդիրն մի քանի աղբիւրներէ ստուգեցինք, և գտանք որ չ'արժէր այդ անհաստակ միջոցառումն ինչորոյ նիւթ ընել:

Գ. Պ. Պըֆլու—Զեր նամակն անհաստական խնդիրներ միայն կը պարունակէ. հրատարակութիւնն անյարմար կը սեպենք:

Աղեղ, Փրօվիտէնս—Հինցած խնդիր մ'է այդ. դուք ալ կը խոստովանիք թէ Հոգարարութեանը այդ ծախքերն ըրած է «օրինական պէտքերի» համար, և թէ «եղծում չի պարունակեր» հաշիւը. ուրեմն ի՞նչ հարկ նորէն քըքրել այդ խնդիր: Հրատարակու հաշիւ տալու օրինաւորութեան կամ ապօրինաւորութեան խնդիրն, որ գծաւորութեան բուն պատճառն եղած լինել կը թուի, չ'արժէր խնդրոյ նիւթ ընել հրատարակու: Սա ճշմարիտ է սակայն թէ Հոգարարութեան, իր հաշիւները եթէ Հայ մամուլ մէջ հրատարակուած էր պաշտօնապէս, պարտաւոր էր այդ մասին հրատարակու ուղղեալ հարցման մը պատասխանել և գոհացում տալ բացատրութիւն պահանջներուն:

Թրոյի Հայեր—Առանց մանրամասնութիւններն լսելու՝ գին անկարելի է տալ: Այս է փաստաբանին պատասխանը:

Անանուն, Նիւ Պրիթըն—Զեր պատասխանը կրնանք միայն համառոտելով հրատարակել:

***, Սէնթրըլ Ծօյս— Նոյն:

Տիգրանակերտցի, թերևս Սարբերդցի Ահարօն ՏէրԱբրահամեան անուն անձէկը խնդրուի ընդ փոյթ տեսնել զՍաղ վարդապետ ի թիւ 154 իսթ 27րդ փողոց կարևոր գործի մը համար:

